



«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Taxpayers Rights Protection» Public Organization

ք. Երևան, 21.06.16 թ.
Ելք N° 029

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
պրն. Հ. ԱՐՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Մեծարգո վարչապետ,

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2013 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 424-Ն հրամանով հաստատված՝ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգի 18-րդ կետով սահմանված է, որ գանգատարկման հանձնաժողովի նիստերին կարող է մասնակցել ցանկացած անձ, այդ թվում՝ գանգվածային լրատվության ներկայացուցիչները, նախապես այդ մասին գանգատարկման հանձնաժողովին տեղեկացնելով: Նշվածով պայմանավորված «Հարկ վճարողների պաշտպանություն» հասարակական կազմակերպությունը դեռևս 2014 թվականից սկսած՝ բազմիցս գրավոր դիմել է հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով, հայտնելով, որ նախատեսում է մասնակցել հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի առաջիկա նիստերին, խնդրելով տեղեկացնել հանձնաժողովի առաջիկա նիստերի անցկացման մասին: Սակայն, որևէ անգամ, հանձնաժողովի կողմից արձագանք չի եղել և գրությունները մնացել են անպատասխան: Հարկային մարմինն ուղղված վերջին գրությունները թվագրված են 2016 թվականի մարտի 24-ին և ապրիլի 21-ին:

ՀՀ կառավարության հակակոռուպցիոն, մենաշնորհների դեմ պայքարի նախաձեռնության նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու վկայությունը կարող է դառնալ պետական մարմինների գործունեության թափանցիկությունն ու հանրային հաշվետվողականությունը:

Մինչդեռ, հարկային մարմնի կողմից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի ապրիլի 12-ի թիվ 18-Ն հրամանով հաստատված՝ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգով վերանայվեց հանձնաժողովի նիստերին այլ անձանց մասնակցության հնարավորությունը: Ստացվում է, որ հարկային մարմինն ուղղված նախավերջին գրությանը հարկային մարմինը արձագանքեց, սահմանափակելով հասարակական կազմակերպություններին հանձնաժողովի նիստերին մասնակցելու հնարավորությունը:

Հետևաբար, ստացվում է, որ գանգատարկման հանձնաժողովի գործունեության թափանցիկությունն ապահովելու փոխարեն սահմանափակվեց այն:

ՀՀ կառավարության հակակոռուպցիոն, մենաշնորհների դեմ պայքարի նախաձեռնության նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու նպատակով խնդրում ենք Ձեր միջնորդությունը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի նիստերին դիտորդի կարգավիճակով հասարակական կազմակերպությունների ներգրավումն ապահովվելու համար:

Հայտնում ենք նաև, որ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովում որոշում կայացվում է ոչ թե նիստի ընթացքում՝ հարկ վճարողի մասնակցությամբ, այլ ավելի ուշ, առանց հարկ վճարողի ներկայության: Թերևս այդ հանգամանքը տարակուսանք է առաջացնում, քանի որ ՀՀ վարչապետի գլխավորած տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հենց նիստի ընթացքում՝ հարկ վճարողի ներկայությամբ: Ստացվում է, որ ՀՀ վարչապետի գլխավորած հանձնաժողովի գործառույթներն իրականացվում են առավել թափանցիկ:

Կից ներկայացվում է 2015 և 2016 թվականների ընթացքում հարկային մարմինն ուղղված գրությունների պատճենները:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան